ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 448

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքը (Եղեգնաձոր քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Եղեգնաձոր համայնքի (Եղեգնաձոր քաղաքի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքը (Եղեգնաձոր քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Վայոց ձոր-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի (Եղեգնաձոր քաղաքի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
10-001-0174-0037 կադաստրային ծածկագրով 2.54 հա մակերեսով արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր	10-001-0174-0037 կադաստրային ծածկագրով 2.54 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր, 8 հարկանի շենք, ԲՆԿԳ-3 (6-9 վերգետնյա հարկ, (նկուղային հարկ)

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինի գրությամբ ներկայացված պահանջները (կցվում է):

4. Եղեգնաձոր քաղաքի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Եղեգնաձոր քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի համայնքի (Եղեգնաձոր քաղաքի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Լ.Առաքելյան

Երևան, «29» «դեկտեմբերի» 2025 թ.